



ՀԿ

«Ես գտնվում
եմ Դուբլինի
ընթացակարգում. ի՞նչ
է դա նշանակում»:

Բ

Տեղեկատվություն միջազգային պաշտպանության
համար դիմողների վերաբերյալ Դուբլինի
Կանոնակարգի մասին՝ համաձայն թիվ 604/2013
Կանոնակարգի (ԵՄ) 4-րդ հոդվածի

Ձեզ տրամադրվել է այս փաստաթուղը, քանի որ այս երկրում կամ այլ դուբլինյան երկրում դիմել եք միջազգային պաշտպանության (ապաստանի) խնդրանքով, և այս երկրի իշխանությունները հիմքեր ունեն ենթադրելու, որ Ձեր հայցի քննության հարցը կարող է վերապահված լինել այլ երկրի:

Մենք կորոշենք, թե որ երկրին է վերապահված այդ հարցը քննել այն ընթացակարգի միջոցով, որ նախատեսված է Եվրոպական Միության օրենքով և հայտնի է որպես «Դուբլինի Կանոնակարգ»: Այս գործընթացը կոչվում է «Դուբլինի ընթացակարգ»: Այս փաստաթղթի նպատակն է պատասխանել այն հարցերին, որ Ձեզ մոտ կարող են հաճախակի առաջանալ այս ընթացակարգի վերաբերյալ:

Եթե այստեղ գրված որևէ բան հասկանալի չէ Ձեզ համար, խնդրում ենք ճշտել իշխանության ներկայացուցիչների հետ:

Այս փաստաթուղթն ունի միայն տեղեկատվական նպատակներ: Դրա նպատակն է միջազգային պաշտպանության համար դիմող անձանց անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել Դուբլինի ընթացակարգի վերաբերյալ: Այն ինքնին չի ստեղծում կամ առաջացնում որևէ իրավունքներ կամ իրավական պարտավորություններ: Պետությունների և քաղաքացիների՝ ըստ Դուբլինի ընթացակարգի ունեցած իրավունքներն ու պարտականությունները սահմանված են թիվ 604/2013 Կանոնակարգում (ԵՄ):

©Եվրոպական Միություն 2014

Վերադարձվողությունը թույլատրված է: Ցանկացած նպատակով օգտագործման կամ առանձին լուսանկարների վերատադրության համար՝ պետք է անմիջականորեն վերցնել հեղինակային իրավունքի սեփականատերերի թույլտվությունը:



Դուբլինյան երկրներն ընդգրկում են Եվրոպական Միության 28 երկրները (Ավստրիա (AT), Բելգիա (BE), Բուլղարիա (BG), Գերմանիա (DE), Դանիա (DK), Էստոնիա (EE), Իռլանդիա (IE), Իսպանիա (ES), Իտալիա (IT), Լատվիա (LV), Լիտվա (LT), Լեհաստան (PL), Լյուքսեմբուրգ (LX), Խորվաթիա (HR), Կիպրոս (CY), Յունաստան (EL), Յունգարիա (HU), Մալթա (MT), Միացյալ Թագավորություն (UK), Նիդերլանդներ (NL), Շվեդիա (SE), Չեխիայի Հանրապետություն (CZ), Պորտուգալիա (PT), Ռումինիա (RO), Սլովակիա (SK), Սլովենիա (SI), Ֆինլանդիա (FI), Ֆրանսիա (FR), ինչպես նաև Դուբլինի կանոնակարգին «ասոցացված» 4 երկրներ (Նորվեգիա (NO), Իսլանդիա (IS), Շվեյցարիա (CH) և Լիխտենշտեյն (LI)):

«ԻՆչՈՒ՞ եմ ես գտնվում Դուբլինի ընթացակարգում»:

Դուբլինի Կանոնակարգը կիրառվում է 32 երկրներ ընդգրկող աշխարհագրական տարածաշրջանի նկատմամբ: **«Դուբլինյան երկրներն» են՝** (Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Լյուքսեմբուրգ, Խորվաթիա, Կիպրոս, Յունաստան, Յունգարիա, Մալթա, Միացյալ Թագավորություն, Նիդերլանդներ, Շվեդիա, Չեխիայի Յանրապետություն, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, ինչպես նաև Դուբլինի կանոնակարգին «ասոցացված» 4 երկրներ (Նորվեգիա, Իսլանդիա, Շվեյցարիա և Լիխտենշտեյն):

Դուբլինի ընթացակարգը սահմանում է, թե որ միակ երկիրն է պատասխանատու Ձեր ապաստանի դիմումը քննելու համար: Սա նշանակում է, որ Ձեզ կարող են տեղափոխել այս երկրից դեպի այլ երկիր, որը պատասխանատու է Ձեր դիմումը քննելու հարցում:

Դուբլինի ընթացակարգն ունի երկու նպատակ՝

- երաշխավորել, որ Ձեր ապաստանի մասին դիմումը հասնի այն երկրի իշխանություններին, որոնք պատասխանատու են այն քննելու համար,
- ապահովել, որ Դուբլի ապաստանի համար բազմակի դիմումներ չներկայացնեք մի քանի երկրներում՝ դուբլինյան երկրներում Ձեր բնակությունը երկարաձգելու համար:

Մինչև կորոշվի, թե որ երկիրն է պատասխանատու Ձեր դիմումի վերաբերյալ որոշում ընդունելու հարցում, այս երկրի իշխանությունները չեն քննի Ձեր դիմումի մանրամասները:

ՉԻՇԵՔ. Դուբլի չպետք է մեկնեք այլ դուբլինյան երկիր: Եթե մեկնեք այլ դուբլինյան երկիր, Ձեզ ետ կվերադարձնեն այստեղ կամ այն երկիր, ուր նախապես դիմել եք ապաստանի համար: Ձեր դիմումի գործընթացն այստեղ կիսատ թողնելով՝ Ձեր գործի համար պատասխանատու երկիրը չի փոխվի: Եթե թաքնվեք կամ փախուստի դիմեք, նաև կենթարկվեք կալանքի առնվելու ռիսկին:

Եթե նախկինում եղել եք դուբլինյան երկրներից որևէ մեկում և դրանից հետո լքել եք դուբլինյան երկրների տարածաշրջանը՝ նախքան այս երկիր գալը, ապա պետք է դրա մասին հայտնեք մեզ: Այն կարևոր է, քանի որ կարող է ազդել Ձեր դիմումը քննելու համար պատասխանատու երկրի ընտրության վրա: Ձեզնից կարող է պահանջվել ապացույցներ



տրամադրել դուբլինյան երկրներից դուրս անցկացրած ժամանակի մասին, օրինակ՝ կնիք անձնագրի մեջ, վերադարձի կամ վտարման որոշում կամ դուբլինյան երկրներից դուրս բնակվելու կամ աշխատելու մասին պաշտոնական փաստաթղթեր:

«Ի՞նչ տեղեկություններ պետք է հայտնեմ իշխանություններին: Ինչպե՞ս կարող եմ այդ տեղեկությունները ներկայացնել իշխանություններին»:

Հավանական է, որ Ձեզ կանչեն հարցազրույցի, որպեսզի հնարավոր լինի որոշել, թե որ երկիրն է պատասխանատու ապաստանի Ձեր հայցը քննելու համար: Հարցազրույցի ժամանակ Ձեզ կբացատրենք «Դուբլինի ընթացակարգը»: Մեզ պարտավոր էք տրամադրել Ձեր ունեցած ողջ տեղեկատվությունը դուբլինյան երկրներից որևէ մեկում գտնվող Ձեր ընտանիքի անդամների կամ ազգականների մասին, ինչպես նաև այլ տեղեկատվություն, որ գտնում եք անհրաժեշտ է պատասխանատու երկրի որոշման համար (տես ստորև՝ մանրամասն ցուցումների համար, թե ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ): Պարտավոր եք նաև ներկայացնել Ձեր տրամադրության տակ գտնվող ցանկացած փաստաթղթեր կամ թղթեր, որ պարունակում են անհրաժեշտ տեղեկատվություն:

Խնդրում ենք հայտնել մեզ ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը, որպեսզի օգնեք որոշել, թե որ երկիրն է պատասխանատու Ձեր դիմումը քննելու հարցում:

Հարցազրույցն անց կկացվի այն լեզվով, որ հասկանում եք կամ ենթադրվում է, որ բավարար չափով գիտեք և կարող եք դրանով հաղորդակցվել:

Եթե չեք հասկանում հաղորդակցության լեզուն, ապա կարող եք Ձեր հաղորդակցվելուն աջակցելու նպատակով թարգմանիչ խնդրել: Թարգմանիչը թարգմանում է միայն այն, ինչ ասում եք Դուք և հարցազրույցը վարողը: Թարգմանիչը չի կարող ավելացնել իր սեփական տեսակետները: Եթե դժվարանում եք հասկանալ թարգմանչին, ապա հայտնեք մեզ և/կամ դիմեք Ձեր իրավաբանին:

Հարցազրույցն անց կկացվի գաղտնի: Դա նշանակում է, որ Ձեր տրամադրած տեղեկատվությունից ոչինչ, ներառյալ ապաստանի համար դիմելու փաստը, չի ուղարկվի այն երկրի անձանց կամ իշխանություններին, որտեղից եք ծագումով, ովքեր կարող են որևէ կերպ վնաս պատճառել Ձեզ կամ Ձեր ընտանիքի այն անդամներին, որոնք դեռևս գտնվում են Ձեր հայրենի երկրում:

Հարցազրույցի իրավունքը Ձեզ կմերժվի միայն այն դեպքում, եթե արդեն տրամադրել եք այս տեղեկատվությունը այլ միջոցներով, այն բանից հետո, երբ տեղեկացվել եք Դուբլինի ընթացակարգի և Ձեր իրադրության համար դրա հետևանքների մասին: Եթե Ձեզ հետ հարցազրույց չանցկացվի, կարող եք խնդրել տրամադրել լրացուցիչ գրավոր տեղեկատվություն, որը կարևոր է պատասխանատու երկրի որոշման հարցում:

«Ինչպե՞ս են իշխանությունները որոշում կայացնում, թե որն է իմ դիմումի համար պատասխանատու երկիրը»:

Գոյություն ունեն տարբեր հիմքեր, ըստ որոնց որևէ երկիր կարող է պատասխանատու համարվել Ձեր հայցը քննելու համար: Այդ հիմքերը կիրառվում են օրենքով նախատեսված կարևորության կարգով: Եթե հիմքերից մեկը կիրառելի չէ, ապա հաշվի է առնվում հաջորդը և այդպես շարունակ:

Հիմքերը վերաբերում են հետևյալ գործոններին՝ ըստ կարևորության կարգի.

- ունեք որևէ ընտանիքի անդամ (ամուսին, կին կամ 18 տարեկանից ցածր երեխաներ), որին միջազգային պաշտպանություն է շնորհվել կամ որը ապաստան է հայցում այլ դուբլինյան երկրում,

Ըստ այդմ կարևոր է, որ հայտնեք մեզ, եթե ընտանիքի անդամներ ունեք այլ դուբլինյան երկրում՝ նախքան Ձեր ապաստանի հայցի վերաբերյալ առաջին որոշումը ընդունելը: Եթե ցանկանում եք միավորվել Ձեր ընտանիքի հետ նույն երկրում, Դուք և Ձեր ընտանիքի անդամը պետք է Ձեր ցանկության մասին հայտնեք գրավոր:

- Ձեզ նախապես վիզա կամ կեցության թույլտվություն է տրվել այլ դուբլինյան երկրում,
- Ձեր մատնահետքերը վերցվել են այլ դուբլինյան երկրում (և պահպանվել են Eurodac¹⁾ կոչվող եվրոպական տվյալների բազայում),
- Կան ապացույցներ այն մասին, որ գտնվել եք այլ դուբլինյան երկրում կամ անցել եք այլ երկրով, եթե նույնիսկ այնտեղ մատնահետքեր չէք հանձնել:



1) Eurodac-ի մասին լրացուցիչ տեղեկությունները նշված են փաստաթղթի 1-ին էջում՝ «Ես ապաստան եմ հայցել ԵՄ-ում. ո՞ր երկրի կողմից կքննվի իմ գործը»:

«Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, երբ ես ունեմ որևէ մեկի խնամակալության կամ որևէ մեկը իմ խնամակալության կարիքը»:

Դուք կարող եք վերամիավորվել Ձեր **մոր, հոր, երեխայի, եղբոր կամ քրոջ** հետ միևնույն երկրում, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները.

- Նրանք դուքիսյան երկրներից որևէ մեկի օրինական բնակիչ են,
- Ձեզնից մեկը հղի է կամ ունի նորածին երեխա, լուրջ հիվանդ է, ունի ծանր հաշմանդամություն կամ ծեր է,
- Ձեզնից մեկը կախված է մյուսի խնամակալությունից, ով կարող է նրան խնամք տանել:

Այն երկիրը, որտեղի բնակիչ է հանդիսանում Ձեր երեխան, քույրը/եղբայրը կամ ծնողը, սովորաբար պատասխանատվություն է կրում Ձեր դիմումը քննելու հարցում այն պայմանով, որ Ձեր միջև ընտանեկան կապեր են գոյություն ունեցել այն երկրում, որտեղից եք ծագումով: Ձեզնից նաև կպահանջվի, որ գրավոր կերպով նշեք, որ երկուսդ էլ ցանկանում եք վերամիավորվել:

Այս հնարավորությունից կարող եք օգտվել այն դեպքում, երբ արդեն այն երկրում եք, որտեղ գտնվում է Ձեր երեխան, քույրը/եղբայրը կամ ծնողը, ինչպես նաև եթե գտնվում եք Ձեր ազգականների բնակության երկրից տարբեր երկրում: Երկրորդ դեպքում պետք է ճամփորդեք տվյալ երկիր, եթե չունեք առողջական այնպիսի վիճակ, որ խոչընդոտում է Ձեր կողմից երկարատև ճամփորդության կատարմանը:

Բացի այս հնարավորությունից, Ձեզ ապաստան տրամադրելու գործընթացի ժամանակ Դուք միշտ կարող եք խնդրել միավորվել ընտանիքի որևէ անդամի հետ՝ մարդասիրական, ընտանեկան կամ մշակութային պատճառներով: Եթե դրան հավանություն տրվի, ապա պետք է տեղափոխվեք այն երկիր, որտեղ գտնվում է Ձեր ընտանիքի անդամը: Այս դեպքում Ձեզնից նաև կպահանջվի տալ Ձեր համաձայնությունը գրավոր կերպով: Կարևոր է, որ մեզ հայտնեք որևէ առկա մարդասիրական պատճառների մասին, ըստ որոնց Ձեր հայցը պետք է քննվի այստեղ կամ այլ երկրում:

Երբ առաջանում են ընտանեկան հարաբերությունների, խնամակալության կամ մարդասիրական հարցեր, Ձեզնից կարող է պահանջվել տրամադրել բացատրություն կամ Ձեր պահանջները հաստատող ապացույցներ:

«Ի՞նչ է լինում այն դեպքում, երբ հիվանդ եմ կամ հատուկ կարիքներ ունեմ»:

Ձեզ համապատասխան բժշկական խնամք կամ բուժում տրամադրելու համար՝ իշխանությունները պետք է տեղյակ լինեն Ձեր ունեցած որևէ հատուկ կարիքի մասին, ներառյալ առողջական և մասնավորապես, եթե Դուք.

- հաշմանդամ եք,
- հղի եք,
- լուրջ հիվանդություն ունեք,
- ենթարկվել եք խոշտանգման, բռնաբարության կամ այլ լուրջ ձևերի հոգեբանական, ֆիզիոլոգիական և սեռական բռնության:

Եթե մեզ հայտնեք Ձեր առողջական տվյալները, և որոշվի, որ պետք է Ձեզ ուղարկել այլ երկիր, մենք Ձեզնից թույլտվություն կխնդրենք, որպեսզի հայտնենք Ձեր բժշկական տվյալները այն երկրին, ուր ուղարկվում եք: Եթե համաձայն չեք, Ձեր բժշկական տվյալները չեն հայտնվի, սակայն այն չի կանխարգելի Ձեր տեղափոխմանը տվյալ պատասխանատու երկիր: Հաշվի առնեք, որ եթե չհամաձայնեք, որ Ձեր բժշկական տվյալներն ուղարկենք այլ երկիր, ապա տվյալ երկիրը չի կարողանա հոգալ Ձեր հատուկ կարիքները:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այն մասնագետները, որոնք գաղտնիությունը պահպանելու պարտավորություններ են ստանձնել, Ձեր բժշկական տվյալներին միշտ խիստ գաղտնիությամբ կվերաբերվեն:

«Որքա՞ն ժամանակ է անհրաժեշտ՝ որոշելու համար, թե որ պետությունն է քննելու իմ դիմումը: Որքա՞ն ժամանակ է անհրաժեշտ մինչև իմ դիմումի քննելը»:

Եթե այս երկրի իշխանության մարմինները որոշեն, որ մենք ենք պատասխանատու ապաստանի Ձեր դիմումը քննելու հարցում, ապա կարող եք մնալ այս երկրում և Ձեր դիմումը քննության կենթարկվի այստեղ:

«Ինչ կպատահի, եթե այլ պետությունն՝ ոչ այն պետությունը, որտեղ այժմ գտնվում եմ, պատասխանատու ճանաչվի իմ դիմումը քննելու հարցում»:

Եթե գտնենք, որ այլ պետություն է պատասխանատու Ձեր դիմումի քննության համար, ապա այդ պետությանը պատասխանատվություն ստանձնելու հարցում կներկայացնենք՝ այս երկրում Ձեր դիմումը հանձնելու ամսաթվից հետո **3 ամսվա** ընթացքում:

Սակայն եթե այլ պետության պատասխանատվությունը հաստատվի Ձեր մատնահետքերի տվյալների հիման վրա, ապա տվյալ պետությանն ուղղված հարցումը կներկայացվի Eurodac-ից արդյունքները ստանալու պահից հետո **2 ամսվա** ընթացքում:

- *Եթե առաջին անգամ եք ապաստան հայցում դուրբիխյան երկրում, սակայն հիմքեր կան ենթադրելու, որ այլ դուրբիխյան երկիր պետք է քննի Ձեր ապաստանի դիմումը, մենք կպահանջենք այդ պետությանը «ստանձնել Ձեր գործի պատասխանատվությունը»:*

Այն պետությունը, որին մենք հարցում ենք ուղարկում, պետք է պատասխան ներկայացնի հարցումն ստանալուց հետո **2 ամսվա** ընթացքում: Եթե տվյալ պետությունը չի պատասխանում նշված ժամանակամիջոցում, ապա նշանակում է, որ ընդունել է Ձեր դիմումը քննելու պատասխանատվությունը:

- *Եթե արդեն ապաստանի դիմում եք ներկայացրել այլ դուրբիխյան երկրում, որը տարբեր է այս երկրից, որտեղ ներկա պահին գտնվում եք, մենք տվյալ պետությանը կխնդրենք Ձեզ «ետ ընդունել»:*

Այն պետությունը, որին մենք հարցում ենք ուղարկում, պետք է պատասխան ներկայացնի հարցումն ստանալուց հետո **1 ամսվա** ընթացքում կամ **2 շաբաթվա** ընթացքում, եթե հարցումը հիմնված է Eurodac-ի տվյալների վրա: Եթե տվյալ պետությունը չի պատասխանում նշված ժամանակամիջոցում, ապա նշանակում է, որ ընդունել է Ձեր դիմումը քննելու պատասխանատվությունը և համաձայնում է Ձեզ ետ ընդունել:

Սակայն եթե այս երկրում չեք դիմել ապաստանի համար, իսկ Ձեր ապաստանի նախկին դիմումը այլ երկրում վերջնական որոշմամբ մերժվել է, մենք կամ կարող ենք որոշել հարցում ուղարկել այդ պատասխանատու պետությանը՝ Ձեզ ետ ընդունելու, կամ սկսել

գործընթաց՝ Ձեզ ետ ուղարկելու այն երկիր, որտեղից եք ծագումով կամ որտեղ ունեք մշտական բնակություն կամ էլ որևէ այլ ապահով երրորդ երկիր:

Եթե այլ պետությունն ընդունի, որ պատասխանատու է Ձեր դիմումի քննության հարցում, Ձեզ կտեղեկացնենք մեր որոշման մասին.

- որ ապաստանի մասին Ձեր հայցը չի քննվի այստեղ՝ այս երկրում,
- որ Դուք պետք է տեղափոխվեք պատասխանատու երկիր:

Ձեր տեղափոխումը կիրականացվի տվյալ երկրի կողմից պատասխանատվությունն ստանձնելու ամսաթվից հետո 6 ամսվա ընթացքում, իսկ եթե որոշել եք վիճարկել որոշումը, ապա 6 ամսվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ դատարանը կամ ատյանը որոշի, որ պետք է ուղարկվեք տվյալ երկիր: Այս ժամանակահատվածը կարող է երկարաձգվել, եթե այստեղի իշխանություններից փախուստի դիմեք կամ եթե կալանավորվեք:

Եթե այս երկրում, համաձայն Դուքիսի ընթացակարգով սահմանված կարգի, Ձեզ պահեն կալանքի տակ/փակ կենտրոնում, կարող են կիրառվել ավելի կարճ ժամանակահատվածներ (լրացուցիչ տեղեկատվության համար՝ տես կալանքի մասին հատուկ բաժինը):

Պատասխանատու պետությունը Ձեզ կվերաբերվի որպես ապաստան հայցողի և Դուք կվայելեք դրա հետ կապված բոլոր իրավունքները: Եթե տվյալ երկրում նախկինում երբեք չեք դիմել ապաստանի համար, ապա Ձեզ հնարավորություն կտրվի դիմել Ձեր ժամանումից հետո:

«Ի՞նչ կլինի այն դեպքում, երբ ես չհամաձայնեմ ինձ այլ երկիր ուղարկելու որոշման հետ»:

Դուք հնարավորություն ունեք հայտնելու, որ համաձայն չեք Ձեզ այլ դուբլինյան երկիր ուղարկելու որոշման հետ: Այն կոչվում է «բողոքարկում» կամ «վերանայում»:

Կարող եք նաև խնդրել Ձեր տեղափոխման գործընթացի կասեցում՝ բողոքարկման կամ վերանայման ժամանակահատվածի ընթացքում:

Այս փաստաթղթի վերջում կարող եք գտնել տեղեկատվություն այն մասին, թե որ մարմիններին դիմել՝ այս երկրում որոշումը վիճարկելու համար:

Երբ իշխանություններից ստանաք տեղափոխման մասին պաշտոնական որոշումը, Դուք կունենաք 14 օր՝ Վիլնյուսի շրջանային վարչական դատարանին-ին բողոք ներկայացնելու համար:

Շատ կարևոր է, որ որոշումը վիճարկեք (բողոքարկում կամ վերանայում) նշված ժամանակամիջոցի ընթացքում:

Ձեզ 14 օր է հատկացվում՝ հայցելու համար, որ Ձեր տեղափոխումը կասեցվի, քանի դեռ Ձեր բողոքարկումը քննության է ենթարկվում (հայտը պետք է ներկայացվի բողոքի հետ): Դատարանը կամ ատյանը այս հայցի վերաբերյալ արագ կերպով որոշում կընդունի: Եթե այն մերժի կասեցումը, ապա Ձեզ կհայտնեն դրա պատճառների մասին:

Այս գործընթացի ժամանակ Դուք իրավաբանական օգնություն, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, լեզվական աջակցություն ստանալու իրավունք ունեք: Իրավաբանական օգնությունը նշանակում է, որ իրավունք ունեք ունենալ իրավաբան, որը կպատրաստի Ձեր փաստաթղթերը և Ձեզ կներկայացնի դատարանի առջև:

Կարող եք խնդրել, որ Ձեզ անվճար օգնություն տրամադրվի, եթե չեք կարող վճարել դրա համար: Իրավաբանական օգնություն տրամադրող կազմակերպությունների մասին տեղեկությունները կարող եք գտնել այս փաստաթղթի վերջում:

BERLIN
644 m.

(TEMPELHOF)

AMSTERDAM
284 m.

BRUSSELS (MELSBROEK)

288 m.

463 km

ZURICH

(KLOTZBACH)

938 m.

508 m.

ROME

(CIVILIA)

1025 m.

LONDON AIR

86 m.

PARIS

«Ինձ կարող են կալանավորել»:

Ձեզ կալանավորելու համար կարող են լինել այլ պատճառներ, սակայն համաձայն Դուբլինի ընթացակարգի, Ձեզ կարող են կալանավորել միայն այն դեպքում, երբ մեր իշխանությունները գտնեն, որ զգալի ռիսկ կա, որ կարող եք փախուստի դիմել, քանի որ չեք ցանկանում ուղարկվել այլ դուբլինյան երկիր:

«Ի՞նչ է սա նշանակում»:

Եթե մեր իշխանությունները գտնեն, որ զգալի ռիսկ կա, որ կարող եք փախուստի դիմել, քանի որ նախկինում արդեն դա արել եք կամ չեք կատարում Ձեր հաշվետու լինելու պարտավորությունները և այլն, ապա Ձեզ կարող են կալանքի տակ վերցնել՝ Դուբլինի ընթացակարգի ժամանակ ցանկացած պահի: Ձեր կալանավորման պատճառները սահմանված են օրենքով: Ձեզ չեն կարող կալանավորել այլ պատճառներով, քան նախատեսված է օրենքով:

Դուք իրավունք ունեք գրավոր կերպով տեղեկացվելու Ձեր կալանավորման պատճառների, ինչպես նաև կալանավորման որոշումը վիճարկելու հնարավորությունների մասին: Դուք նաև իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեք, եթե ցանկանում եք վիճարկել կալանավորման որոշումը:

Եթե կալանավորվել եք Դուբլինի ընթացակարգի ժամանակ, ապա այդ ընթացակարգի ժամանակամիջոցները Ձեզ համար կլինեն հետևյալը.

- Ձեր ապաստանի դիմումը ներկայացնելուց հետո **1 ամսվա** ընթացքում մենք կպահանջենք այլ պետությանը ստանձնել պատասխանատվություն:
- Այն պետությունը, որին հարցում ենք ուղարկել, պետք է պատասխանի մեր հարցումն ստանալուց հետո **2 շաբաթվա** ընթացքում:
- Ձեր տեղափոխումը պետք է իրականացվի պատասխանատու երկրի կողմից հարցումն ընդունելուց հետո **6 շաբաթվա** ընթացքում: Եթե Դուք վիճարկեք տեղափոխման որոշումը, ապա 6 շաբաթվա ժամանակահատվածը կհաշվվի այն պահից, երբ իշխանությունները, դատարանը կամ ատյանը որոշեն, որ Ձեզ համար ապահով է պատասխանատու երկիր ուղարկելը այն ընթացքում, երբ Ձեր բողոքարկումը քննության է ենթարկվում:

Եթե մենք չպահպանենք հարցումն ուղարկելու կամ Ձեր տեղափոխումն իրականացնելու վերջնաժամկետները, ապա համաձայն Դուբլինի Կանոնակարգի՝ տեղափոխման

նպատակով կատարված Ձեր կալանավորմանը վերջ կտրվի: Այդ դեպքում կկիրառվեն վերը նշված սովորական ժամանակամիջոցները:

«Ի՞նչ է կատարվում իմ տրամադրած անձնական տեղեկատվության հետ: Ինչպե՞ս ես կարող եմ իմանալ, որ այն չի չարաշահվի»:

Դուբլինյան երկրների իշխանությունները կարող են Դուբլինի ընթացակարգի ժամանակ Ձեր տրամադրած տվյալները փոխանակել՝ միմիայն Դուբլինի և Eurodac-ի կանոնակարգերով սահմանված իրենց պարտականությունների կատարման նպատակով: Դուբլինի ողջ ընթացակարգի ժամանակ Դուք իրավունք ունեք, որ պաշտպանվեն Ձեր, Ձեր ընտանեկան դրության և այլնի մասին տրամադրված Ձեր բոլոր անձնական տվյալները և տեղեկությունները: Ձեր տվյալները կարող են օգտագործվել միայն օրենքով սահմանված նպատակներով:

Դուք իրավունք ունեք ձեռք բերելու.

- Ձեզ վերաբերվող տվյալները: Դուք իրավունք ունեք պահանջելու, որ այդ տվյալները, այդ թվում Eurodac-ի տվյալները ճշտվեն, եթե ճշգրիտ չեն, կամ ջնջվեն, եթե ոչ օրինական կարգով են մշակվել,
- Այն տեղեկատվությունը, որով բացատրվում է, թե ինչպես պահանջել, որ Ձեր տվյալները, այդ թվում, Eurodac-ի տվյալները, ճշտվեն կամ ջնջվեն: Այն ներառում է Ձեր Դուբլինի ընթացակարգի համար պատասխանատու իրավասու մարմինների կոնտակտային տվյալները, ինչպես նաև տվյալների պաշտպանության ազգային մարմինների կոնտակտային տվյալները, որոնք զբաղվում են անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող հարցերով:

Եթե ցանկանում եք բողոքարկել որոշումը, սակայն չեք կարող Ձեզ թույլ տալ իրավական ծախսերը, խնդրում ենք դիմել.

Միգրացիայի վարչության Ներքին գործերի նախարարություն

Լ. Սապիեգոս փողոց. 1, 10312 Վիլյուս

հեռ.+370 5 271 7112

Էլ. փոստ: md.rastine@vrm.lt

<http://www.migracija.lt>

doi:10.2847/18761

ISBN 978-92-9243-143-3

